# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ք.Քաջարան,Լեռնագործների 4, Հեռ. 0285-3-21-81

N 493
*08 օգոստոսի 2018թ.*

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
ԿԱՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Մարզպետ,

Ձեզ ենք ուղարկում Քաջարան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 08-ի թիվ 6 արտահերթ նիստի N-38-Ա, N 39-Ա Որոշումները:

Առդիր՝ 13 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝*

*Ձ. Առաքելյան Հեռ.՝ 098199013*

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ N 1064
«09» 08 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, www.qajaran@mail.am

# ՈՐՈՇՈՒՄ N 38-Ա

08 օգոստոսի 2018թվականի

## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8 -Ի ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ- 9 , ձեռնպահ – չկա դեմ-չկա

*ՈՐՈՇՈՒՄ Է*՝

Հաստատել Քաջարան քաղաքային համայնքի ավագանու 2018թ օգոստոսի 8 -ի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը

1 <<Քաջարան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2019թ ծրագիրը>> հաստատելու մասին / Զեկ Գ.Գաբրիելյան/.

Աթայան Մերուժան- Կողմ

Համբարձումյան Կարեն Կողմ

Առաքելյան Սասուն Կողմ

Պետրոսյան Հովհաննես Կողմ

Ստեփանյան Դերենիկ Կողմ

Իսրաելյան Գարիկ Կողմ

Հակոբյան Արմեն Կողմ

Մակիյան Կարինե Կողմ

Սաղաթելյան Էրիկ Կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ Փարամազյան

2018թ օգոստոսի 10

ք.Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, www.qajaran@mail.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08օգոստոսի 2018 թվականի N 39-Ա

## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասի» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 14-րդ և 18-րդ կետերի և 18-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ Օրենքի և Տեղական ինքնակառավարման մարմինների կողմերից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները ՀՀ բնապահպանության և ՀՀ առողջապահության նախարարությունների հետ համաձայնեցնելու կարգի մասին ՀՀ կառավարության 2002թ սեպտեմբերի 26-ի թիվ 1544-Ն որոշումը,և քննարկելով համայնքի ղեկավարի կողմից մշակված և պետական լիազոր մարմնի հետ համաձայնեցված ծրագիրը, համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ-9, ձեռնպահ – չկա դեմ-չկա

*ՈՐՈՇՈՒՄ Է*

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել <<Քաջարան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2019թ ծրագիրը>> / ծրագիրը կցվում է /:

Աթայան Մերուժան- Կողմ
Իսրաելյան Գարիկ Կողմ
Համբարձումյան Կարեն Կողմ
Հակոբյան Արմեն Կողմ

Առաքելյան Սասուն Կողմ

Պետրոսյան Հովհաննես Կողմ

Ստեփանյան Դերենիկ Կողմ

Մակիյան Կարինե Կողմ

Սաղաթելյան Էրիկ Կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ Փարամազյան

2018թ օգոստոսի 10

ք. Քաջարան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

# Ծ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ՔԱՋԱՐԱՆ – 2018

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի առաջնայնությունները սահմանել ենք.

*առաջնորդվելով* Քաջարան համայնքի զարգացման 2018-2022 թթ ծրագրի դրույթներով,
*հիմք ընդունելով* Հայաստանի էներգաարդյունավետ համայնքների դաշինքի շրջանակներում Քաջարան համայնքի ստանձնած պարտավորությունները,
*հաշվի առնելով* կայուն էներգետիկայի զարգացման համար նպաստավոր պայմաններն ու համայնքում առկա հնարավորությունները,
*համոզված լինելով,* որ համայնքի կայուն զարգացումը էապես կախված է էկոլոգիական խնդիրների լուծումից,
*գիտակցելով* էկոլոգիական կրթության և տեղեկատվության կարևորությունը էկոլոգիական մտածողության ձևավորման և համայնքի առջև ծառացած խնդիրների լուծմանը հասարակության ակտիվ մասնակցությունը ապահովելու գործում,
*կարևորելով* բնապահպանական ծրագրերի շարունակականությունը, ամբողջականությունն ու փոխկապակցվածությունը :

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք :
2. ՀՀ կառավարության «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները ՀՀ Բնապահպանության նախարարության ու ՀՀ Առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» 29.09.2002թ թիվ 1544-Ն որոշում:
3. ՀՀ Կառավարության «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» 27.02.2014թ. թիվ 197-Ն որոշում:
4. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք :
5. Քաջարան համայնքի զարգացման 2018-2022 թթ հնգամյա ծրագիր:

## ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ

- ԲՆԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ
- ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ
- ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ
- ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

### ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 1. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

**Խնդիր 1** Համայնքային ենթակառուցվածքների էներգաարդյունավետ արդիականացում

2016թ. ՄԱԶԾ կողմից իրականացվող և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից համակարգվող «Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՀ/00074869 ծրագրի շրջանակներում իրականացվել է Քաջարանի քաղաքային լուսավորության (Լեռնագործներ փողոց) համակարգի էներգաարդյունավետ արդիականացման ցուցադրական նախագիծ՝ ՄԱԶԾ և Քաջարանի քաղաքապետարանի կողմից ստորագրված հուշագրի հիման վրա:

2017թ. Քաջարանի շրջակա միջավայրի պահպանության և ՄԱԶԾ կողմից իրականացվող և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից համակարգվող «Քաղաքային կանաչ լուսավորություն» Ծրագրերի շրջանակներում իրականացվել է ևս երեք փողոցների լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացման նախագիծ:

Իրականացված նախագծերն առանձնացան իրենց արդյունավետությամբ՝ տարեկան ավելի քան 4մլն. Դրամ բյուջետային միջոցների խնայողություն, փողոցների լուսավորվածության բարձր որակ, համակարգի սպասարկման ծախսերի կտրուկ նվազում:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված է 2021թ. ավարտել Քաջարան քաղաքի և համայքում ընդգրկված գյուղական բնակավայրերի փողոցային լուսավորության ամբողջ համակարգի էներգաարդյունավետ արդիականացման աշխատանքները:

**Գործողություն** **Փողոցային լուսավորության համակարգի բարձր ճնշումային նատրիումային լամպերի փոխարինում լուսադիոդային լամպերով**

**Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.**

Հանապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի «*շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքարը, որը ներառում է մթնոլորտային օդի մաքրության պահպանության, ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա) պահպանության, աղմուկի և վիբրացիայի դեմ պայքարի և ճառագայթահարման դեմ պաշտպանության հետ կապված աշխատանքները և գործողությունները (...)* » պարբերությանը:

**Խնդիր 2 Վերականգնվող էներգիայի օգտագործում համայնքային շենքերում**

Քաջարան համայնքը միացել է Հայաստանի էներգաարդյունավետ համայնքների դաշինքին և հանձնառություն ունի համայնքը հետևողականորեն դարձնելու էներգաարդյունավետ՝

համայնքում ներդնելով արդիական էներգետիկական տեխնոլոգիաների, խթանելով համայքում էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործումը:

Արևային էներգետիկայի զարգացումը ՀՀ կառավարության էներգետիկ քաղաքականության առաջնային, ամենաարդիական և ինտենսիվ զարգացող ուղղություններից մեկն է: Ընդունվել են վերականգնվող էներգառեսուրսների կիրառումը խթանող օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր: Նպաստավոր օրենսդրական դաշտ է ստեղծված արևային էներգետիկայի զարգացման համար:

Համայնքում կայուն էներգետիկայի զարգացմանը նպաստող և համայնքի համար շոշափելի արդյունք ապահովող ուղղություններից մեկը համայնքային շենքերում վերականգնվող էներգիայի օգտագործումն է:

Համայքապետարանի կողմից այս ծրագրի իրականացումը նաև ուսանելի օրինակ կլինի համայնքի բնակիչների համար և վերականգնվող էներգառեսուրսների օգտագործումը քարոզող հաջողված քայլ:

**Գործողություն. Արևային ֆոտովոլտաիկ կայանի կառուցում Քաջարանի արվեստի դպրոցի շենքում:**

Հանապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի *«շրջակա միջավայրի փեղական և փարածաշրջանային աղփոփվածության դեմ պայքարը, որը ներառում է մթնոլորտային օդի մաքրության պահպանության, ջրային ռեսուրսների (մակերևութային և սփորերկրյա) պահպանության, աղմուկի և վիբրացիայի դեմ պայքարի և ճառագայթահարման դեմ պաշփպանության հետ կապված աշխատանքները և գործողությունները (...) »* պարբերությանը:

## Հիմնախնդիր 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

### Խնդիր 1. Էկոլոգիական կրթության զարգացում և տեղեկատվություն

Համայնքում էկոլոգիական կրթության զարգացումը համայնքապետարանի կողմից իրականացվող էկոլոգիական քաղաքականության հիմնական բաղադրիչն է:

«Քաջարանի բնության և բնակչության առողջության պահպանություն» ծրագրի շրջանակներում էկոլոգիական գիտելիքների տարածման և էկոկրթության զարգացման նպատակներով համայնքի հանրակրթական դպրոցների ուսումնական պլաններում ընդգրկվել է «Քաջարան. Բնությունը և էկոլոգիան» դպրոցական առարկան: Կազմվել է համապատասխան ուսումնական ձեռնարկ, ուսումնական դիտակտիկ նյութեր: Առարկայի դասավանդումը, դասընթացն ավելի գործնական, հաճելի ու գրավիչ դարձնելու համար Ծրագրի շրջանակներում դպրոցներում մասնագիտացված էկոլոգիական դասարան-լաբորատորիաներ են ստեղծվել, համալրվել համապատասխան ուսումնական նյութերով ու սարքավորումներով: Դասարան-լաբորատորիաների ուսումնական արդիական տեխնիկական միջոցներով հագեցված լինելը համակողմանի ու արդյունավետ է դարձնում աշակերտների էկոլոգիական կրթության ու դաստիարակության կազմակերպումը:

**Գործողություն 1. Քաջարանի դպրոցներում քաղաքապետարանի կողմից ստեղծված էկոլոգիայի լաբորատորիաների գործունեության ապահովում**

- *լաբորատոր նյութերի, պարագաների համալրում,*
- *ուսումնական դիտակտիկ նյութերի ձեռք բերում,*
- *դաշտային բանակումների և բնապահպանական ճամբարների կազմակերպում,*
- կրթական ծառայությունների ձեռք բերում:

*Հիմնավորում.* «Քաջարան.բնությունը և էկոլոգիան» ուսումնական առարկայի դասավանդման ու դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների ընթացիկ գործունեության ապահովումն իրականացնում է համայնքապետարանը: Այս բնագավառում քաղաքապետարանի հանձն առած գործունեությունը լիովին համապատասխանում է «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին», «Կրթության մասին», «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքների, ՄԱԿ-ի «ԵՏՀ Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության սկզբունքներին ու դրույթներին:

**Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.**

Հանապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի *« շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ տեղեկատվության տարածման կամ իրազեկման, էկոլոգիական կրթության գծով աշխատանքները և գործողությունները, բնապահպանությանը վերաբերող վերապատրաստման դասընթացների կազմակերպումը և ինստիտուցիոնալ ամրապնդումը»* և Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի *«համայնքահեն բնապահպանական հասարակական կազմակերպություններին սույն կետում նշված միջոցառումների կատարման համար աջակցության ցուցաբերումը»* պարբերություններին:

Հիմնախնդիր 4. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

**Խնդիր 1. Համայնքի բնակավայրերի սանիտարահիգիենիկ վիճակի բարելավում**

Համայնքի սանիտարահիգիենիկ իրավիճակի վրա բացասական ազդեցություն է թողնում բնակավայրերում առկա պուրակներում և որոշ հանգստի գոտիներում աղբամանների բացակայությունը: Այս հանգամանքը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում նաև քաղաքի սանիտարական մաքրումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

**Գործողություն. Համայնքի բնակավայրերի պուրակների, հանգստյան գոտիների, փողոցների համար աղբամանների ձեռք բերում:**

**Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.**

Համապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի *«-թափոնների օգտահանմանը, դրանց անվտանգ հեռացմանը, թափոնների հեռացման մասնագիտական պոլիգոնների ստեղծմանը...»* պարբերությանը:

Հիմնախնդիր 5. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

**Խնդիր 1. Բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների որակը**

Համայնքի բնակչությանը Քաջարանի բժշկական կենտրոնի կողմից մատուցվող բժշկական ծառայությունների որակը բարձրացնելու, ծառայությունների սպեկտրը ընդլայնելու և մատչելի և հասանելի դարձնելու նպատակով համայնքապետարանը Ծրագրի շրջանակներում պարբերաբար տեխնիկական աջակցություն է ցուցաբերում բժշկական կենտրոնին:

Աջակցության անհրաժեշտ ուղղություններն ու ձևերը քննարկվում են բժշկական կենտրոնի ղեկավարության և աշխատակիցների հետ:

**Գործողություն. Համայնքի բժշկական կենտրոնի կարողությունների զարգացում**

**Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.**

Համապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի բ) կետի *« - առողջապահության բնագավառում լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված այլ համապատասխան միջոցառումներ...»* պարբերությանը:

**Խնդիր 2. Աջակցել մասսայական ֆիզկուլտուրայի զարգացմանը**

Ֆիզիկական դաստիարակությունը անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևոր բաղադրիչ է: Ֆիզիկական դաստիարակության նպատակն է ժամանակին ձևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները, զարգացնել հետաքրքրություն՝ երեխային մատչելի շարժողական գործունեությանզանազան ձևերի նկատմամբ, դաստիարակել անձի բարոյակամային հատկանիշներ:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներով սահմանված են այն պայմանները, որոնք պետք է ունենան նախադպրոցական կրթական հաստատությունները երեխաների ֆիզիկական զարգացումն ապահովելու համար:

**Գործողություն. Ֆիզիկական զարգացման պայմանների բարելավում համայնքային մանկապարտեզում**

**Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.**

Համապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի բ) կետի *« - առողջապահության բնագավառում լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված այլ համապատասխան միջոցառումներ...»* պարբերությանը:

# ԱՄՓՈՓՈՒՄ

Ծրագրի իրականացումը թույլ կտա ապահովել իրականացված բնապահպանական ծրագրերի անընդհատությունը և շարունակականությունը, կբարձրացնի էկոլոգիական կրթության զարգացման համար ներդրված միջոցների արդյունավետությունը և կբարելավի քաղաքի էկոլոգիական պայմանները:

Էներգախնայողության, էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի զարգացման միջոցառումներով համայնքը իր ներդրումը կունենա կլիմայի փոփոխության մեղմմանը ուղղված գործողություններում, կնպաստեն բյուջետային միջոցների խնայմանը, ինչպես նաև կնպաստեն համայնքի կայուն զարգացման հիմքերի ծտեղծմանն ու ամրապնդմանը:

Ծրագիրը կնպաստի նաև համայնքային և պետության կողմից տրամադրվող միջոցների, ՀՀ –ում գրանցված միջազգային, հումանիտար, ոչ կառավարական և այլ կազմակերպությունների հնարավորությունների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմանը՝ քաղաքի առջև ծառացած էկոլոգիական խնդիրների լուծման նպատակով:

Շրջ. Միջավայրի պահպանության, գյուղատնտ.,<br>Տնտեսական զարգացման և ծրագրերի բաժնի պետ՝ Գ. Գաբրիելյան

Հաստատում եմ

Համայնքի ղեկավար Մ. Փարամազյան

«26» հունիսի 2018թ.

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2019Թ ԾՐԱԳՐԻ

| | Ծրագրի ոլորտը և միջոցառումների անվանումը | Միջոցառումների հիմնական ցուցանիշները | | | | | Ֆինանսավորման ծավալները | | | Այլ տվյալներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կատարման ժամկետ | Չափի միավոր | Միավորի արժեք | Քանակ | Ընդհանուր գումար | Վեց ամիս | Ինը ամիս | Տարի | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | | | | | 18920.0 | 6260.0 | 18510.0 | 18920.0 | |
| 1 | **Քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում** | | | | | **3960.0** | **3960.0** | **3960.0** | **3960.0** | Գնանշման համար հիմք են հանդիսացել լուսադիոդային լուսարձակների ներմուծմամբ և վաճառքով զբաղվող կազմակերպությունների առաջարկած գնացուցակները՝ տեղադրված պաշտոնական կայքերում: Մասնավորապես՝eiektrika am, energysaving.am: Առաջնորդվել ենք նաև 2018թ. իրականացված ծրագրերի արդյունքներով. |
| | *Բարձր ճնշումային նատրիումային լամպերի փոխարինում լուսադիոդային լամպերով* | *3-րդ եռ* | *հատ* | *90.0* | *44* | *3960.0* | *3960.0* | *3960.0* | *3960.0* | |
| 2 | **Կայուն էներգետիկայի զարգացում համայնքում** | | | | | **12000.0** | **0** | **12000.0** | **12000.0** | Գնանշման համար հիմք են հանդիսացել արևային վահանակներ արտադրող և արևային կայանների տեղադրմամբ զբաղվող կազմակերպությունների առաջարկած գնացուցակները՝ տեղադրված պաշտոնական կայքերում: Մասնավորապես՝ http://solaron.am,http://shtigen.com,ecoville am Առաջնորդվել ենք նաև ՇՏԻԳԵՆ ընկերության կողմից իրականացված նախահաշվարկի տվյալներով |
| | *Արևային ֆոտովոլտաիկ կայանի տեղադրում համայքի արվեստի դպրոցի շենքում* | *3-րդ. եռ* | *կՎտ* | *400.0* | *30* | *12000.0* | *0* | *12000.0* | *12000.0* | |
| 3 | **Էկոլոգիական կրթություն, գիտելիք և տեղեկատվություն** | | | | | **1160.0** | **500.0** | **750.0** | **1160.0** | Նախատեսված ծախսերի հաշվարկը ներկայացված է կից բացատրագրում |
| | *Քաղաքի դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների գործունեության ապահովում* | *1-4 եռ.* | *լաբորատ* | *580.0* | *2* | *1160.0* | *500.0* | *750.0* | *1160.0* | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | **Կենցաղային թափոնների կառավարման բարելավում** | | | | | **1800.0** | **1800.0** | **1800.0** | **1800.0** | Նախատեսված ծախսերի հաշվարկը ներկայացված է կից բացատրագրում |
| | *Դուրակների և հանգստյան գոտիների համար աղբամանների ձեռք բերում* | *2-րդ. եռ* | *հատ* | *60.0* | *30* | *1800.0* | *1800.0* | *1800.0* | *1800.0* | |
| **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ** | | | | | | **3700.0** | **500.0** | **500.0** | **3700.0** | |
| 5 | **Աջակցություն Քաջարանի բժշկական կենտրոնին** | | | | | **3200.0** | **0** | **0** | **3200.0** | Գնանշման համար հիմք են հանդիսացել բժշկական գույքի և սարքավորումների ներմուծ¬մամբ և վաճառքով զբաղվող կազմակեր¬պու¬թյունների առաջարկած գնացուցակները՝ տեղադրված պաշտոնական կայքերում և գնի հարցումները. http://unimed.am/, http://medtechnicaplus.am/,https://kassot.com/ Մեր հարցմանը գնառաջարկ ենք ստացել նաև «Յունիմեդ» ՍՊԸ – ից |
| | *Սպիրոմետրի ձեռք բերում* | *4-րդ. եռ* | *հատ* | *1400.0* | *1* | *1400.0* | *0* | *0* | *1400.0* | |
| | *Աուդիոմետրի ձեռք բերում* | | *հատ* | *1800.0* | *1* | *1800.0* | *0* | *0* | *1800.0* | |
| 6 | **Մասսայական ֆիզկուլտուրայի զարգացում** *Ֆիզիկական զարգացման պայմանների բարելավում համայնքային մանկապարտեզում* | | | | | **500.0** | **500.0** | **500.0** | **500.0** | Գնանշման համար հիմք են հանդիսացել բժշկական գույքի և սարքավորումների ներմուծ¬մամբ և վաճառքով զբաղվող կազմակեր¬պու¬թյունների առաջարկած գնացուցակները՝ տեղադրված պաշտոնական կայքերում և գնի հարցումները:http://magnon.am, https://lazalka.ru |
| | *Մանկական բակային մարզասարքերի համալիրի ձեռք բերում համայնքային մանկապարտեզի համար* | *2-րդ եռ* | *լրակազմ* | *500* | *1* | *500.0* | *500.0* | *500.0* | *500.0* | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** Այդ թվում | | | | | | **22620.0** | **6760.0** | **19010.0** | **22620.0** | |
| *Կապիտալ ծախսեր* | | | | | | ***21460.0*** | *5760.0* | *17760.0* | *20960.0* | |
| *Վարչական ծախսեր* | | | | | | ***660.0*** | *1000.0* | *1250.0* | *1660.0* | |

Շրջ. միջ. պահպանության, գյուղատնտեսության, տնտ. զարգացման և ծրագրերի բաժնի պետ՝ Գ. Գաբրիելյան

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

**Քաջարանի քաղաքային համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2019թ. ծրագրով նախատեսված ծախսերի տնտեսագիտական դասակարգման մասին**

1. Քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում- 3960,0 հազ դրամ

**Կապիտալ ծախս է**

*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ թիվ 5-Ն «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման, հավելված 17, խումբ 512900 (Այլ մեքենաներ և սարքավորումներ):*

2. Կայուն էներգետիկայի զարգացում համայնքում – 12000,0 հազ. Դրամ

**Կապիտալ ծախս է**

*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ թիվ 5-Ն «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման, հավելված 17, խումբ 512900 (Այլ մեքենաներ և սարքավորումներ):*

3. Էկոլոգիական կրթության, գիտելիք և տեղեկատվություն - 1160,0 հազ. դրամ

**Վարչական ծախս է**

*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ թիվ 5-Ն «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման,հավելված 16,խումբ 421000 (Շարունակական ծախսեր),423000 (Պայմանագրային ծառայություններ),426000 (Նյութեր):*

4. Պուրակների համար աղբամանների ձեռք բերում – 1800,0 հազ դրամ

**Կապիտալ ծախս է**

*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ թիվ 5-Ն «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման,հավելված 17, խումբ 512900 (Այլ մեքենաներ և սարքավորումներ):*

5. Աջակցություն Քաջարանի բժշկական կենտրոնին – 3200,0 հազ. դրամ

**Կապիտալ ծախս է**

*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ թիվ 5-Ն «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման,հավելված 17, սինթետիկ հաշիվ 512200 (Վարչական սարքավորումներ):*

6. Ֆիզիկական զարգացման պայմանների բարելավում համայնքային մանկապարտեզում – 500,0 հազ. դրամ

**Կապիտալ ծախս է**

*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ թիվ 5-Ն «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման, հավելված 17, խումբ 512900 (Այլ մեքենաներ և սարքավորումներ):*